


**Գեղարդի
Լույսը**

The image shows the interior of a medieval Armenian church. At the top, a large octagonal lantern with intricate carvings is illuminated from within, casting a warm glow. Below it, the walls are covered in detailed relief sculptures. A prominent relief in the center depicts the Resurrection, with an angel rolling away a stone from a tomb. To the right, a large cross is carved into the wall. The architecture features pointed arches and a sense of depth and historical significance.





Գեղարդի Լույսը

ԵՐԵՎԱՆ 2022

ԳԵՂԱՐՈՒԻ ԼՈՒՅՍԸ

Շարականներ, տաղեր, ժողովրդական երգեր
Դանիել Երաժիշտի մշակմամբ

Առաջաբանը՝ Դանիել Երաժիշտի
Երևան, 2022

«Գեղարդի լույսը» ալբոմ -սկավառապատ տեղ են գտել Մ. Մաշտոցի, Մ. Խորենացու, Ս. Սյունեցու, Պ. Ղափանցու և այլոց շարականները և տաղերը, հայ ժողովրդական երգեր, որոնք Դանիել Երաժիշտը մշակել է կանանց երգչախմբի համար: Ալբոմը պարունակում է խմբերգերի պարտիտուրները և սկավառակը՝ «Գեղարդ» երգեցիկ խմբի կատարմամբ:


ISBN 978-9939-9283-0-2

ISMN 979-0-69380-329-3

© Դանիել Երաժիշտ, 2022

© ©«Նարեկացի» արվեստի միություն , 2022

© «Գեղարդ» երգեցիկ խումբ, 2022



Դանիել Երաժիշտ

«Գեղարդի» Լույսը

«Որքան ապրի հայկական
երաժշտությունը, այնքան
կապրի Հայաստանը»

Կոմիտաս*

«Նարեկացի» արվեստի միության բարեգործական առաքելությունը հատկապես կարևորվում է ճգնաժամային պահերին, երբ մշակույթի մայրուղիներում առավել են ծառանում խոչընդոտները: Տեղին է հիշել Ռաբինդրանատ Թագորի հետևյալ մանրապատումը. «Արևն ասում է. -«Ես մայր եմ մտնում, ո՞վ կարող է ինձ փոխարինել: -Ես, Ձերդ պայծառափայլություն, ինչով կարող եմ, -պատասխանում է մոմը»:

Հերթական փորձություն էր հայ ժողովրդի համար 44-օրյա պատերազմը, որը չէր կարող չարձագանքվել արվեստագետների հոգում: Եվ նրանք էլ Վահան Տերյանի պես կարող էին հռետորական հարց տալ. «Մի թե՛ վերջին պոետն եմ ես...»: Սակայն կյանքը ցույց տվեց, որ հավատքն է հաղթողը.

*Որքան մութը սև՝ այնքան ես համառ,
Երկնիք իմ երկիր հավատով անմար,
Սուրբ է քո ուղին և պսակըդ վեհ ...*

Այդ է վկայում «Նարեկացի» արվեստի միության թողարկած «Գեղարդի» լույսը ալբոմ-սկավառակը, որը նվիրված է «Գեղարդ» երգեցիկ խմբի գործունեության 20 և Դանիել Երաժշտի ծննդյան 75-ամյակին:

Ալբոմը պարունակում է շարականներ, տաղեր և ժողովրդական երգեր, որոնք «Գեղարդ» իգական խմբի համար բազմաձայնել և ձոնել է տողերիս հեղինակը: Խմբերգերի ձայնագրությունները կատարվել են «Կոմիտասի թանգարան-ինստիտուտի» համերգասրահում: Դրանք կատարվել են գիշերները, որպեսզի մեքենաների աղմուկը չխանգարի: Սակայն գիշերներն էլ մերթ քնդ մերթ ձայնագրումը ընդհատվում էր անհանգիստ երկինքը «պատառոտող» ինքնաթիռների որոտով, և դա չէր կարող չանդրադառնալ կատարողների հոգեվիճակի վրա:

* «Կոմիտասական», հատոր 1-ին, ՀՍՍՀ ԳԱ ՆՐԱՏ; Երևան, 1969, էջ 259:

Ժամանակին, 2-րդ աշխարհամարտի օրերին Մոսկվայում նման մթնոլորտում էր տեղի ունեցել հանճարեղ դաշնակահարուհի Մարիա Յուդինայի մենահամերգը: Վերջում նրան մոտեցել էր մեծանուն դաշնակահար Հենրիխ Նեյհաուզը և զարմացած հարցրել, թե ինչո՞ւ է նա Բախի մեղմաձայն, աղոթքային «Սի-մինոր» պրելյուդը այդքան հնչեղ ձայնով նվագում: Դաշնակահարուհին պատասխանել էր. «Բայց չէ՞ որ հիմա պատերազմ է»: Ահա նման խորհուրդ ունեն նաև ալբոմում զետեղված «Գեղարդ»-ի կատարումները, քանի որ դրանք տոգորված են նաև գոյաբանական էքզիստենցյալ բնույթով: Այդպես վավերական և արդիական են հնչում Պետրոս Գետադարձի «Սրբոց Ատովմանց» նահատակներին նվիրված, Անանիա Շիրակացու «Վասն մերոյ փրկութեան», Աշոտ Պատրիկ Բագրատունու «Զորս ըստ պատկերի քում ստեղծեր» շարականների մշակումները և այլ խմբերգեր:

Պատմության ընթացքում «Վասն Հաւատոյ եւ վասն Հայրենեաց» ոչ միայն Վարդանանց, Ղևոնդյանց արյունն է հեղվել, այլ նաև Ատովմանց, ցեղասպանության նահատակների, մերօրյա հերոսների: Դեռ Հովհաննես Իմաստասեր սարկավազն է ասել.

*Հեղմամբ արեան սրբոց քոց հօտապետաց
Զեկեղեցոյ քո ցրուեալ մանկունս ժողովեան:*

Ըստ Գրիգոր Հակոբյանի, Ղևոնդյանց նվիրված այս շարականը համարվում է հայրենասիրական մոտիվներ պարունակող առաջին երգը, որը կոչ է անում սփռված հայերին վերադառնալ, միաբանվել եկեղեցու ներքո (Գրիգոր Հակոբյան, «Շարականների ժանրը, հայ միջնադարյան գրականության մեջ», ՀՍՍՀ ԳԱ ՀՐԱՏ, Երևան 1980, էջ 217):

Ատովմանց շարականում էլ ասվում է.

Որք մաքրեցին զանձինս իւրեանց տաճար անուանդդ քում սըրբոյ.

Եւ բուրեցին հոտ անուշութեան զաղօթս իւրեանց ի տեղուջ հեղման սուրբ արեան իւրեանց. բարեխօսութեամբ սոցա, Քրիստոս, խընայեա ի մեզ:

Ներսես Շնորհալիին էլ «Նորահրաշ պսակավոր» շարականում ասում է.

*Վարդան, քաջ նահատակ, որ վանեցեր ըզթշնամին,
Վարդագոյն արեամբըդ քո պսակեցեր զեկեղեցի:*

Այսպես, Գարեգին Սրվանձտյանցի «Գողթնի քնարք» երգում ասվում է.

*Թէ հայրենեաց պսակադիր
Գողթնի քնարք լռել են,
Երկնից թող գան անմահ հոգիք,
Հայոց քաջեր պսակել:*

*Մասեաց գագաթն թող գան բազմին,
Երկնից գունդ-գունդ հրեշտակներ,
Աստուած իջեր ի Հայաստան,
Հայոց արիւնն հոտոտել:*

Եվ հիշյալ հրեշտակներին ձայնակցում է «Գեղարդ» երգչախումբը, հնչյունակերտ պսակներով զարդարում մերօրյա քաջերի ճակատը:

Հայրենասիրական մոտիվներով հագեցած է նաև Պետրոս Ղափանցու պոեզիան: Բանաստեղծին նվիրված մենագրությունում Շուշանիկ Նազարյանը գրում է. «Պետրոս Ղափանցին վարդի և սոխակի երգերով ամբողջացնում է միջնադարում ստեղծված այդ բնույթի երգերի անցած ուղին՝ հասցնելով այն մի նոր աստիճանի: Վարդը՝ որպես հայրենիքի խորհրդանիշ, և սոխակը, որպես հայրենիքի ազատության երգչի խորհրդանիշ...» (Պետրոս Ղափանցի, Երևան, «խորհրդային գրող» հրատ., 1990, էջ 15):

Սույն ալբոմում զետեղված նրա «Առաւօտեան քաղցր և անոյշ հովերըն» տաղից երգվում է միայն առաջին տունը, սակայն այս մեծակերտ պոեմի տներից 68-րդ տան մեջ հեղինակն ասում է.

*Երդնում ի գլուխ և յարև քո տիրական,
Ո՛չ ծիծաղիլ և ո՛չ բերկրիլ յաւիտեան,
Մինչև տեսից ըզքեզ բացուաց ի լըրման.
Բացի՛ր, բացի՛ր, իմ կարմիր վարդ աննըման,
Գեղըդ նըման արեգական վառվառման:*

Սրանով Պ. Ղափանցին ասում է, որ չի կարող ուրախանալ, քանի դեռ հայրենիքը ազատագրված չէ:

Ի դեպ, Պ. Ղափանցուց հետո վարդի կերպարը, իբրև հայրենիքի խորհրդանիշ, կիրառել է նաև Մկրտիչ Պեշիկթաշլյանը «Տարագիրն» քերթվածում.

*Օտարութիւն, դու փուշ ես,
Այլ Հայրենիք, դու վարդ ես:*

Հայերը, որպես առաջին քրիստոնյա, Հիսուսին խաչակից ժողովուրդ, իսկ Հայաստանը, որպես «Երկիր դրախտավայր», իր աշխարհագրական դիրքով հաճախ է գրավել քոչվոր ցեղերին և նրանց օգտագործող զավթիչներին և ենթարկվել ասպատակությունների: Ուստի հայ ժողովուրդը զենքով պաշտպանվելուց զատ աղոթքներով, սիրով, երկյուղա-

ծությամբ փառաբանել է արարչին և հայցել օգնություն և փրկություն: Դիմել է նաև Աստվածածնին և սրբերին, հայցելով նրանց բարեխոսությունն առ Աստված: Այս գաղափարները արտացոլվում են նաև «Գեղարդ» խմբի ներկայացված երկացանկում: Այսպես, Մեսրոպ Մաշտոցի շարականում ասվում է. «Յարենե փրկեա զիս, որ հոգւոց եւ մարմնոց ունիս իշխանութիւն. եւ ողորմեա»:

Ստեփանոս Սյունեցու շարականներում երգվում է.

«Օգնական ընդունելի եղեւ իմ Տէր, ինձ ի փրկութիւն...», «նայեցայ ի գործըս քո եւ փառաւորեցից ըզքեզ՝ Քրիստոս, որպէս մարդասէր...»:

Երգացանկում հատուկ տեղ են զբաղեցնում Մարիամ Աստվածածնին նվիրված երգերը: Մովսէս Խորենացու «Լոյս լուսոյ մայր» շարականում ասվում է.

«Լոյս ծագեցաւ ի քէն նըստելոցս ի խաւարի...»:

Աստվածածնին նվիրված Մ. Խորենացու հաջորդ շարականում երգվում է.

*Ըզքեզ, աղաչեմք հանապազ, Սուրբ Աստուածածին ,
Բարեխօսեա՛ Քրիստոսի՝ Աստուծոյ մերոյ,
Փըրկել ըզմեզ ի փորձութենէ
Եւ ամենայն վըտանգից մերոց:*

Իսկ անհայտ հեղինակի «Վարանիմ ի մեղաց» տաղում դրախտից արտաքսված Ադամին հիշեցնող մարդը դիմում է Մարիամին.

*Վարանիմ ի մեղաց, դու ազատիչ մեղուցելոյս, ղ՛վ Տիրամայր...
Ցողեա՛ կաթիլ մի կուսական զօրեղ կենաց...
Յիմ նախկին վայելմանց
Արժանապէս արտաքսեցայ...
Փուշ եւ տատասկ բուսոյց
Երկիր ողորմելոյս:*

Այս աղոթքը միանգամայն Գրիգոր Նարեկացու ոգով է.

*...Ահա մի կաթիլ կուսական կաթիդ
Մեջս անձրևելով՝ կյանք է տալիս ինձ,
Ղ՛վ մայրդ բարձրյալ տիրոջ Հիսուսի...
(Գ. Նարեկացի, Մատյան ողբերգութեան, գլ. 2):*

«Գեղարդ» խմբի ծրագրում տեղ է գտել նաև աշխարհիկ գործիչ Հայաստանի կառավարիչ Աշոտ Պատրիկ Բագրատունու (†689) հորինած շարականը, որը կանոնացրել է եկեղեցին: Նա կերտել է նաև քարե մի «շարական», նկատի ունենք Դարոյնքի եկեղեցին, որի բացմանը հնչել է այս երգը:

Ջորս ըստ պատկերի քում ստեղծեր, նորոգելով քեզ տաճարացուցեր, զնորոգեալս ի մենջ ըզտաճարս ընկալ քեզ ի բնակութիւն:

Այժմ անդրադառնանք հոգևոր և ժողովրդական երգերի մշակման, բազմաձայնման անհրաժեշտությանը, քանի որ կարող է հարց ծագել, թե ինչ կարիք կա լրացուցիչ ձայներ հավելելու միաձայն երգերին՝ ինքնաբավ մոնոդիաներին:

Բազմաձայնության մեջ մոնոդիայի և հավելված ձայների միջև տեղի է ունենում, այսպես կոչված, սիներգիա՝ փոխգորացում, ռեզոնանս, և նրանք միմյանց արտացոլում են ինչպես հայելին հայելու մեջ:

Երգերի բազմաձայն տարբերակները բնավ չեն փոխարինում բնօրինակներին, դրանք տարբեր, ինքնուրույն երաժշտաձևեր են:

Բազմաձայնումը դրսևորում է մոնոդիայի «ընդերքում» թաքնված, զսպված ներուժը: Այդպես է բացվում վարդի կոկոնը, այդպես է ցորենի հատիկը վերածվում հասկի, ինչպես «սպիտակ» լույսը անցնելով, բեկվելով բյուրեղի միջով, վերածվում է բազմագույն, «բազմաձայն», «յոթնարփեան» ծիածանի, այնպես էլ մոնոդիայի մեղեդին, անցնելով երգահանի սրտի միջով, վերածվում է, Կոմիտասի խոսքով ասած, «սքանչելեաց սքանչելիք» բազմաձայնության:

Միայն բազմաձայնությունն է հնարավորություն տալիս ստեղծելու «զուգահեռ դրամատուրգիա», միաժամանակ արտահայտելով հակադրամիասնական (ամբիվալենտ) հոգեվիճակներ՝ մարդկային հոգու նարեկյան երկատվածությունը: Կարելի է զուգահեռներ անցկացնել բազմաձայնած մոնոդիայի և մի պատկերի հետ, որը հանդիպում ենք Վահան Թեքեյանի «Եկեղեցին հայկական» բանաստեղծությունում, ահավասիք.

*Եկեղեցին հայկական... Անտառ մըն է ստվերոտ,
Ուր շուշաններ կծաղկին Շարականի գետին մոտ...*

Այստեղ «Շարականի գետը»՝ մոնոդիան է, բնօրինակը, իսկ անտառն ու ծաղիկները՝ շարականը պարուրող, «նվագակցող» ձայները: Ի դեպ, երգերը անտառի հետ համեմատել է դեռ Ալբերտ Շվայցերը: Այս առիթով նա գրում է. Լյուտերը թույլ չտվեց, որպեսզի հին անտառը կտրեն. «Անվրեպ զգացողությունը օգնել է նրան գիտակցելու, որ նոր երգը պիտի վերընձյուղվի հին անտառի ստվերում:» (Альберт Швейцер "Иоганн Себастьян Бах", изд. Музыка, Москва 1964, стр 10):

Բազմաձայնության շնորհիվ է որ, տողերիս հեղինակը, Անանիա Շիրակացու «Վասն մերոյ փրկութեան» շարականի վերջում բուն մեղեդիին զուգահեռ զետեղել է հայտնի «Երազ» երգի հետևյալ հատվածի մեղեդին.

*...Փայլեց նշույլ ուրախության,
Բայց ափսոս, որ երազ էր:*

Նույնը և «Յարուկ մ'ունիմ խորոտիկ» երգում: Այստեղ երգի հերոսը, ով սպասում և կարոտում է սիրեցյալին, ասում է.

*Յարուկ մ'ունիմ խորոտիկ,
Ունքերն ի կեռ, ինք՝ բարձրիկ:
Կերուիմ, վառուիմ՝ ետ չի գայ,
Սիրտս ի այրե՝ ջուր չի տայ:*

Այստեղ բուն մեղեդիին զուգահեռ հնչում է Կոմիտասի «Հով արեք սարեր» երգի սկիզբը: Քանի որ դրա հետևյալ բառերը. «Սարերը հով չեն անում, Իմ դարդին դարման անում...»: Համահունչ են նախորդ երգի «Սիրտս ի այրե՝ ջուր չի տայ» բառերին:

Բազմաձայնության՝ պոլիֆոնիայի և հարմոնիայի միջոցով է ակնհայտ դառնում ստեղծագործությունների վերջում նշմարվող լադային որոշակիությունը մաժոր է, թե՛ մինոր: Իսկ դա մեծ նշանակություն ունի դասական երաժշտության մեջ:

Երբ երաժշտությունը սկսվում, ծավալվում է հիմնականում մինոր տոնայնության մեջ և ավարտվում է հուսադրող, լուսավոր մաժորում, այն կարող է խորհրդանշել «խավարից դեպի լույս» ճանապարհը: Այդպես է, հատկապես, Յոհան Սեբաստիան Բախի արվեստում: Հայ միջնադարյան երգարվեստում հանդիպում ենք նաև հակառակ վեկտորը՝ մաժորից՝ մինոր:

Այդպես է «Սրբոց Ատովմանց» շարականում, որտեղ մարմնավորվում է այն գաղափարը, որ, թեպետ Ատովյանները հաղթեցին, բայց կորստյան գնով: Իսկ Պետրոս Դավանցու «Առաւօտեան քաղցր և անոյշ հովերըն» տաղում լուսավոր մաժորային մեղեդին վերջում մշուշվում է ու հանգրվանում մինոր տոնայնության մեջ:

Սա էլ իր խորհուրդն ունի, որը ինչպես նշեցինք, վառ կերպով արտահայտված է տաղի 68-րդ տան մեջ, վերոհիշյալ բառերում, որտեղ պոետը ողբում է իր հայրենիքի ճնշված վիճակը ու փափագում նրա ազատագրումը:

«Գեղարդի» այս ծրագրի վերջում հնչում են միմյանց կցված ժողովրդական երգեր: Այդպիսի համակցումը գալիս է Կոմիտասից:

Այս ավանդույթին հետևել է նաև տողերիս հեղինակը, համակցելով կոնտրաստային զույգ երգեր՝ «Գորանի» և «Սասմա կելներ բարակ ծուխ» ու «Յարուկ մ'ունիմ խորոտիկ» և

«Մատիս մատնիքը» երգերը: Առաջին զույգը Մուշ-Տարոնի շրջանի երգեր են, վերցված Միհրան Թումաճանի ժողովածուից (Մ. Թումաճան, Հայրենի երգ ու բան, ՀՍՍՀ ԳԱ ՀՐԱՏ., Երևան 1986, հ. 3 էջ 10): Մյուս զույգ երգերը գրի են առվել երգչուհի Մանիկ Գրիգորյանի կատարումից:

«Գորանի» երգը շաղախված է մեծագույն սիրով, թեպետ ցորենի ամբողջ բերքը փչացել է, սակայն գեղջուկը ավելի շատ մտածում է սիրեցյալի մասին:

*Ցորեն իմ ցանի, վայ, իդա դարակող,
Աստված անիծեր, զիդա արտ ու հող
Շամամ չէր հասներ, ճամփենք յարոջ փոխ:*

Իսկ «Սասմա կելներ բարակ ծուխ» երգում ասվում է.

*Սասմա կելներ բարակ ծուխ,
Վայ գյուլում, գյուլում, գյուլում,
Ես յար մ'ունեմ Բուլանուխ,
Վայ գյուլում էր, ջան գյուլում:*

Յարին կարոտած երիտասարդն ինքն իրեն մխիթարվում է. «Սրտիկ մալուլ մի՛ կենա, աշխարհք մարդու չի մնա»: Այսինքն սիրտ մի տխրիր... Սա հիշեցնում է մեկ ուրիշ նույնաբնույթ երգ. «Ալաշկերտցիք բարձան գացին, Մուշ, Բուլանուխ նստան լացին»...

«Գեղարդ» խմբի երկացանկում տեղ գտած և սույն ալբոմում ձայնագրած երգերը ապրում են և ապրեցնում, գոտեպնդում են մեզ հարատևել մինչև հայոց վարդը բացվի և, ինչպես «Գողթնի քնարը» երգում է ասվում «Մինչև Հայոց գա գարուն»:

ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ



«Գեղարդ» երգեցիկ խումբ

Գեղարվեստական ղեկավար՝ Միեր Նավոյան
Խմբավար՝ Անահիտ Պապայան

«Գեղարդ» երգեցիկ խումբը կազմավորվել է 2001 թվականին մեներգչուհի Անահիտ Պապայանի ջանքերով: Գեղարվեստական ղեկավարն է արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Միեր Նավոյանը:

Բացի կիրակի և եկեղեցական տոն օրերին Գեղարդավանքում Ս. Պատարագի երգեցողությունից՝ խումբը ծավալել է լայն համերգային գործունեություն Հայաստանում և արտերկրում՝ հիմնական նպատակ ունենալով ներկայացնել հայ խմբերգային արվեստը: Հաճախ համերգներն ուղեկցվում են Միեր Նավոյանի դասախոսություններով հայ երաժշտության վերաբերյալ:

Խումբը համագործակցում է ՀՀ Մշակույթի նախարարության «Հայ հոգևոր երաժշտության կենտրոնի» հետ:

«Գեղարդ» երգեցիկ խմբի ծրագիրն ընդգրկում է.

- V-XV դդ. հայ միջնադարյան մոնոդիաներ՝ մենակատարային և խմբային կատարումներով,

- հայ հոգևոր և ժողովրդական երգերի խմբերգային մշակումներ՝ հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների կողմից,

- հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ,

- օտարազգի կոմպոզիտորների ստեղծագործություններ:

«Գեղարդ»-ը բազմաթիվ համերգներով հանդես է եկել Գերմանիայում, Ավստրիայում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում, Չեխիայում, Բելառուսում, Լեհաստանում, Իտալիայում, Բելգիայում, Լիբանանում, Ռուսաստանում, Շվեդիայում:

Վերջին շրջանի կարևոր ձեռքբերումներն են մասնակցությունը աշխարհահռչակ Զալցբուրգի փառատոնին և համերգը Էլբֆիլհարմոնիում (Համբուրգ):

Նշանակալի փառատոնների շարքում են Մոսկվայի Զատկական փառատոնը Ռուսաստանում, միջազգային “Kirkko Soikoon” փառատոնը Ֆինլանդիայում, հոգևոր երաժշտության “Voix et Route Romane” միջազգային փառատոնը Ստրասբուրգում (Ֆրանսիա), Միջազգային Բախակադեմիայի “Musicfest” փառատոնը Շտուտգարտում (Գերմանիա), հոգևոր երաժշտության “Sacrées Journées de Strasbourg” միջազգային փառատոնը Ստրասբուրգում (Ֆրանսիա), “Des Voûtes célestes” միջազգային փառատոնը (Վոնդեյ, Ֆրանսիա), հոգևոր երաժշտության “Musica Sacra International” միջազգային փառատոնը Մարկտոբերդորֆում (Գերմանիա), “Al Bustan” միջազգային փառատոնը Բեյրութում (Լիբանան), «Հոգևոր երաժշտության միջազգային ակադեմիա» փառատոնը Սանկտ Պետերբուրգում (Ռուսաստան) և այլն:

2010 թ. խումբը մասնակցել է երկու միջազգային մրցույթի՝ Բելառուսի «Կոլոժսկի բլազովեստ» մրցույթում արժանանալով «Գրան Պրի» մրցանակի և առաջին մրցանակի՝ Լեհաստանում «Հայնովկայի եկեղեցական երաժշտության օրեր» մրցույթում:

«Գեղարդ» երգեցիկ խումբը թողարկել է 3 լազերային սկավառակ. «Հայկական երաժշտություն» (2002), «Հայկական խորան» (2005), «Խորհուրդ խորին» (2013):



Ողորմեա ինձ, Աստված
Ապաշխարութեան Շարական

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ
 Բազմաձայնումը՝ Դանիել Երաժշտի

Orandum

Soprano 1
 Ողորմեա ինձ, Աստված, զի քեզ միայնոյ

Soprano 2
 Ողորմեա ինձ,

Alto 1
 Ողորմեա ինձ,

Alto 2
 Ողորմեա ինձ,

4

S. 1
 մեղայ: Առաւել լըռու զիս ի տղմոյ յանցա -

S. 2
 մեղայ: Առաւել

A. 1
 մեղայ: Առաւել լըռու

A. 2
 մեղայ: Առաւել

10

S. 1
 նագ, աղբիւր բըժըշկութեան, եւ ողորմեա

S. 2
 լըռու զիս, եւ ողորմեա

A. 1
 զիս, աղբիւր, եւ ողորմեա

A. 2
 լըռու, աղբիւր, եւ ողորմեա

14

S. 1
- մեա: Յա - րե - նէ փըր-կեա զիս, որ հոգ - ւոց եւ մարմ -

S. 2
- մեա: Յա - -

A. 1
- դոր - մեա: Յա րե - նէ փըր - կեա

A. 2
մեա, n - դոր - մեա: Յա - րե - նէ փըր - կեա,

19

S. 1
նո - ց ու - նիս իշ - խա - նու - թիւն. եւ n -

S. 2
- րե - նէ փըր - կեա զիս, փըր - -

A. 1
զիս, փըր - կեա

A. 2
փըր - -

22

S. 1
դոր - - մեա:

S. 2
կեա եւ n - դոր - - մեա:

A. 1
զիս եւ n - դոր - մեա:

A. 2
կեա զիս, եւ n - դոր - մեա:

Մեսրոպ Մաշտոց (4-5-րդ դդ.)
Ողորմեա ինձ, Աստուած
Ապաշխարութեան Շարական

Ողորմեա ինձ Աստուած, զի քեզ միայնոյ մեղայ:

Առաւել լըա զիս ի տըղմոյ յանցանաց, աղբիւր
բըժըշկութեան, եւ ողորմեա:

Յարենէ փըրկեա զիս, որ հոգւոց եւ մարմնոց ունիս
իշխանութիւն. եւ ողորմեա:

* * *

Ողորմիր ինձ, Աստված, որովհետև միայն քեզ
մեղանչեցի:

Աղբիւր բժշկության, հանցանքների տիղմից ինձ
ավելի լվա և ողորմիր:

Դու, որ հոգիների և մարմինների վրա իշխանություն
ունես, արյունից փրկիր ինձ և ողորմիր:

Հոյս լուսոյ մայր
Կանոն Աստուածայայտութեան

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ (5-րդ դ.)
Բազմաձայնումը՝ Դանիել Երաժշտի

Հավատով
Religioso *mp*

Soprano 1
Հոյս լուսոյ մայր, եւ կե - նա - րար Բա-նին բնա - կա - րան.

Soprano 2
mp
Հոյս.

Alto 1
mp
Հոյս.

Alto 2
Հոյս.

5
S 1
բնգ եւ - րա - նի - ցն ազգ եւ ա - զինք ա - մն - - նա - յն:

S 2
բնգ ազգ ա - - - մն - - նայն:

A 1
բնգ եւ - րա - նի - ցն ազգ, ա - զինք ա - մն - նա - յն:

A 2
բնգ ա - զինք ա - մն - նա - յն:

10
S 1
Ստեղծո - ղին մայր, եւ հը - նութեան կերպի նո - րո - գո - ղին. *p* բնգ եւ - րա - նի -

S 2
Ստեղծո - ղին մայր, նո - րո - գո - ղին. *p* բնգ եւ -

A 1
մայր, հը - նութեան նո - րո - գո - ղին. *p* բնգ եւ -

A 2
մայր, եւ հը - նութեան նո - րո - գո - ղին. *p* բնգ եւ -

15 *mf*

S 1
 գնն ազգ եւ ա - զինք ա - մն - նա - յն: Լոյս ծա - զն -

S 2
 րա - նի - գնն ա - մն - - նաջն: Լոյս

A 1
 րա - նի - գնն ա - զինք ա - մն - նա - յն: Լոյս

A 2
 րա - նի - գնն ա - մն - նա - յն: Լոյս ծա - զն -

20

S 1
 ցաւ ի քէն նրա տն - լոցս ի խա - ւա - րի. քնզ եւ - րա - նի -

S 2
 խա - ւա - րի. քնզ եւ - րա - նի -

A 1
 ծա - զն - ցաւ խա - ւա - րի. քնզ

A 2
 ցաւ ի քէն խա - ւա - - րի. քնզ

24 *rit.*

S 1
 գնն ազգ եւ ա - զինք ա - մն - նա - - - - - յն:

S 2
 գնն ազգ եւ ա - զինք ա - մն - նա - - - - - յն:

A 1
 ազգ, ա - զինք ա - մն - նա - - - - - յն:

A 2
 ազգ ա - մն - նա - - - - - յն:

Մովսես Խորենացի (5-րդ դ.)
Լոյս լուսոյ մայր
Կանոն Աստուածայայտութեան

Լոյս լուսոյ մայր, եւ կենարար բանին բնակարան.
քեզ երանիցեն ազգ եւ ազինք ամենայն:

Ստեղծողին մայր, եւ հընութեան կերպի նորոգողին.
քեզ երանիցեն ազգ եւ ազինք ամենայն:

Լոյս ծագեցաւ ի քէն նըստելոցս ի խաւարի. քեզ
երանիցեն ազգ եւ ազինք ամենայն:

* * *

Լոյսի մայր, կենարար և լոյս Բանին բնակարան,
բոլոր ազգերը քեզ երանի են տալու:

Ստեղծողի եւ հնացած պատկերը նորոգողի մայր,
բոլոր ազգերը քեզ երանի են տալու:

Խաւարի մեջ նստածներիս քեզնից լոյս ծագեց,
բոլոր ազգերը քեզ երանի են տալու:

Երեք Շարական
1. Հզրեզ աղաչեմք հանապազ
 Կանոն Ավերեաց

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ (5-րդ դ.)
 Բազմաձայնումը՝ Դանիել Երաժշտի

Մրտաբաց
Adagio *mp*

Soprano 1
 Հզ - հեզ ա - դա - չեմք հա - նա - պազ,

Soprano 2
mp
 Հզ - հեզ,

Alto 1
mp
 Հզ - - - հեզ ա - դա - չեմք

Alto 2
mp
 Հզ - - - հեզ ա - դա - չեմք

6

S 1
 սուրբ Աստ - ուա - ծա - ծին, բա - րե - խօ - սեա, Փրիս - տո -

S 2
 սուրբ Աստ - ուա - ծա - ծին, բա - րե - խօ - սեա,

A 1
 սուրբ Աստ - ուա - ծա - ծին, բա - րե - խօ - սեա,

A 2
 Աստ - ուա - ծա - ծին, բա - րե - խօ - սեա,

9

S 1
 սի՛ Աս - տու - ծոյ մե - րոյ, փըր - կել ըզ -

S 2
 Աս - տու - ծոյ մե - րոյ, փըր - կել ըզ -

A 1
 Աս - տու - ծոյ մե - րոյ, փըր - կել ըզ -

A 2
 փըր - կել ըզ -

12

S 1
 մեզ ի փոր - ձու - րե - նէ եւ տ - մե -

S 2
 մեզ փոր - ձու - րե - նէ տ - մե -

A 1
 մեզ փոր - ձու - րե - նէ տ - մե -

A 2
 մեզ փոր - ձու - րե - նէ տ - մե -

15

S 1
 նայն վը - տան - զից մե - րոց:

S 2
 նայն վը - տան - զից մե - րոց:

A 1
 նայն վը - տան - զից մե - րոց:

A 2
 նայն վը - տան - զից մե - րոց:

2. Վասըն մերոյ փրկութեան

Կանոն երկրորդ ծաղկազարդին

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ (7-րդ դ.)
Բազմաձայնումը՝ Դանիել Երաժշտի

Խնդրական

mp

Soprano 1
Վա - սըն մե - րոյ փըր - - կու -

mp

Soprano 2
Վա - - - - - սըն մե -

mp

Alto 1
Վա - - - - - սըն մե -

mp

Alto 2
Վա - - - - - սըն մե -

4

S 1
բեան խո - նար - հե - ցար ի յեր - կնից եւ ի

S 2
րոյ խո - նար - հե - ցար յեր - կնից եւ

A 1
րոյ խո - նար - հե - ցար յեր - կնից եւ

A 2
րոյ խո - նար - հե - ցար յեր - կնից եւ

8

f

S 1

Կու - սէն ճարմ - նա - ցար, Աս - տուած,

S 2

Կու - սէն, Աս - տուած,

A 1

Կու - սէն, Աս - տուած,

A 2

Կու - սէն, Աս - տուած,

12

mf

S 1

Բանդ, ո - դոր - մեա մեզ:

S 2

Բանդ, ո - դոր - մեա, ո - դոր - մեա մեզ:

A 1

Բանդ, ո - դոր - մեա մեզ:

A 2

Բանդ, ո - դոր - մեա մեզ:

3. Աղաչենք ըզբեզ փէր Բարեխօսութեամբ

Շարական սրբոց Արուսեանց

ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ (11-րդ դ.)
Բազմաձայնումը՝ Դանիել Երաժշտի

Հավատով
poco piu mosso
mf

Soprano 1
Ա- դա- չեմք ըզ-բեզ, Տէր, բա-րե- խօ- սու- րեամբ սրբ- բոց Ա. - տով - մանց,

Soprano 2

Alto 1
mf
Տէր, բա-րե- խօ-սու- րեամբ սրբ- բոց Ա. - տով-մանց,

Alto 2

6

S 1
որք նա - հա - տա - կե-ցան ի նա - կա - տա - մարտ պա - տե - բազ - մի

S 2
mf
որք նա - հա - տա - կե-ցան ի նա - կա - տա - մարտ հազ -

A 1
նա - կա - տա-մարտ պա - տե - բազ - մի հազ -

A 2
mf
ի նա - կա - տա - մարտ պա - տե - բազ - մի

11

S 1
 հաղթող զը - տան ընդ - դեմ քը - նամ - տյն, բա - րե - սո - րեամբ

S 2
 րող զը - տան քը - նամ - տյն,

A 1
 րող զը - տան քը - նամ - տյն,

A 2
 հաղթող զը - տան ընդ - դեմ քը - նամ - տյն,

15

S 1
 սո - ցա, Քրիստոս, իր - նայ - եա ի մեզ:

S 2
 Քրիստոս, իր - նայ - եա ի մեզ:

A 1
 սո - ցա, Քրիստոս, իր - նայ - եա ի մեզ:

A 2
 Քրիստոս, իր - նայ - եա ի մեզ:

19

S 1
 Որք մ - ռին ըզ - սպա - ռա - զի - նու - րեամբ ըզ - զրա - հըս հա - լա - տոյ

S 2
 Որք մ - - ռին ըզ - զրա - հըս հա - լա - տոյ

A 1

A 2
 մ - ռին ըզ - սպա - ռա - զի - նու - րեամբ

24

S 1
 սըր - տից իւր - եանց եւ ըն - կա - լան ի գլուխ սա - դա - տարտ

S 2
 սըր - տից իւր - եանց

A 1
 սըր - տից իւր - եանց ըն - կա - լան ի գլուխ

A 2
 սըր - տից իւր - եանց

29

S 1
 փրբ - կու - րեան ըզ - նը - Եան խա - չին սու - սեր ընդ մեզ ա - ծեալ

S 2
 սու - սեր ընդ մեզ ա - ծեալ

A 1
 փրբ - կու - րեան խա - չին սու - սեր ընդ մեզ ա - ծեալ

A 2
 փրբ - կու - րեան ըզ - նը - Եան խա - չին սու - սեր ընդ մեզ ա - ծեալ

34

S 1
 ըզ - նը - մա - րիտ Սուրբ Հո - զին, բա - րե - խո - սու - րեամբ

S 2
 ըզ - նը - մա - րիտ Սուրբ Հո - զին,

A 1
 ըզ - նը - մա - րիտ Սուրբ Հո - զին,

A 2
 ըզ - նը - մա - րիտ Սուրբ Հո - զին,

38

S 1
սո - ցա, Քրիստոս, իր - նայ - եա ի մեզ:

S 2
Քրիստոս, իր - նայ - եա ի մեզ:

A 1
սո - ցա, Քրիստոս, իր - նայ - եա ի մեզ:

A 2
Քրիստոս, իր - նայ - եա ի մեզ:

poco piu mosso

42 *mf*

S 1
Որք մաք-րե - ցին զան- ձինս իւր- եանց տա- հար ան - ուա - նըդ Քում

S 2
mf
զան- ձինս իւր- եանց տա- հար ան - ուա - նըդ Քում

A 1
mf
տա- հար ան - ուա - նըդ Քում

A 2
mf
տա- հար ան - ուա - նըդ Քում

46

meno mosso
mp > *p*

S 1
սըր - բոյ եւ բու - բե - ցին հոտ ա - նու-շու- բեան, զա - դօրս իւր - եանց

S 2
սըր - բոյ եւ բու - բե - ցին ա - նու-շու- բեան, զա - դօրս իւր - եանց

A 1
սըր - բոյ զա - դօրս իւր - եանց

A 2
սըր - բոյ եւ բու - բե - ցին հոտ, զա - դօրս իւր - եանց

51

a tempo > *f* > *mf*

S 1
ի տեղ - ւոջ հեղ - ման սուրբ ար - եան իւր - եանց, բա - բե - խօ - սու - բեանք

S 2
ի տեղ - ւոջ հեղ - ման սուրբ ար - եան իւր - եանց,

A 1
ի տեղ - ւոջ հեղ - ման սուրբ ար - եան իւր - եանց,

A 2
ի տեղ - ւոջ հեղ - ման սուրբ ար - եան իւր - եանց,

56

S 1
 un - ga, Բրիս - տոս, ին - հայ - եա ի մեզ:

S 2
 բա - րե - խո - սու - րեամբ ի մեզ:

A 1
 բա - րե - խո - սու - րեամբ ի մեզ:

A 2
 բա - րե - խո - սու - րեամբ ի մեզ:

Երեք Շարական

Մովսես Խորենացի (5-րդ դ.)

1. Ըզքեզ, աղաչեմք հանապազ

Ավերյաց Կանոն

Ըզքեզ աղաչեմք հանապազ, Սուրբ Աստուածածին,
Բարեխօսեա՛ Քրիստոսի՛ Աստուծոյ մերոյ,
Փրկել ըզմեզ ի փորձութենէ
Եւ յամենայն վըտանգից մերոց:

* * *

Աղաչեմ քեզ միշտ, Սուրբ Աստվածածին,
Բարեխօսիր Քրիստոսին՝ մեր Աստծուն,
Փրկելու մեզ փորձությունից,
Եւ մեր բոլոր վտանգներից

Անանիա Շիրակացի (7-րդ. դ.)

2. Վասըն մերոյ փրկութեան

Կանոն երկրորդ Ծաղկազարդին

Վասըն մերոյ փրկութեան խոնարհեցար ի յերկնից եւ ի կուսէն մարմնացար Աստղուած բանդ. ողորմեա մեզ:

Ճշմարտապէս մարմնացար եւ ընդ մարդկան շրջեցար կատարեցեր զամենայն, եւ օրհնեցեր յառաջին անիծիցն. Աստղուած բանդ. ողորմեա մեզ:

Քրիստոս որդի ատուծոյ ի մեռելոց յարուցեալ եւ ի յերկինքս համբարձար. Աստղուած բանդ. ողորմեա մեզ:

Մեր փրկության համար երկնքից իջար և Կույսից մարմնացար. Աստված Բան, ողորմիր մեզ:

Ճշմարտապէս մարմնացար և մարդկանց մեջ շրջեցիր, ամեն բան կատարեցիր և մեզ առաջին անեծքից ազատելով, օրհնեցիր. Աստված Բան, ողորմիր մեզ:

Քրիստոս, Որդի Աստծո, մեռելներից հարություն առար և երկինք համբարձար. Աստված Բան, ողորմիր մեզ:

Պետրոս Գեորգիարձ (11-րդ դ.)

3. Աղաչեմք ըզքեզ Տէր բարեխօսութեամբ Շարական Սրբոց Ատովմանց

Աղաչեմք ըզքեզ տէր բարեխօսութեամբ սրբոց ատովմանց, որք
նահատակեցան ի ճակատամարտ պատերազմի. յաղթող գըտան
ընդդէմ թըշնամոյն. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խընեա ի մեզ:

Որք առին զսպառազինութեան զրահըս հաւատոյ սըրտից իրեանց,
եւ ընկալան ի գլուխ սաղաւարտ փըրկութեան ըզնըշան խաչին,
սուեր ընդ մեջ ածեալ ըզճըշմարիտ սուրբ հոգին. բարեխօսութեամբ
սոցա Քրիստոս խընեա ի մեզ:

Որք մաքրեցին զանձինս իրեանց տաճար անուանող քում սըրբոյ. եւ
բուրեցին հոտ անուշութեան զաղօթս իրեանց ի տեղոջ հեղման
սուրբ արեան իրեանց. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խընեա ի
մեզ:

* * *

Ատովման սրբերի բարեխոսությամբ աղաչում ենք քեզ, Տէր, որոնք
պատերազմի ճակատամարտին նահատակվեցին և հաղթեցին
թշնամուն, նրանց բարեխոսությամբ ողորմիր մեզ, Քրիստոս:

Իրենց սրտի մեջ եղող հավատքը զրահ և սպառազինություն
դարձրած, խաչի նշանն իբրև փրկության սաղավարտ դրեցին իրենց
գլխին, Սուրբ Հոգին՝ իբրև ճշմարիտ սուր, կապելով իրենց մեջքին.
Նրանց բարեխոսությամբ ողորմիր մեզ, Քրիստոս:

Նրանք իրենց անձերը մաքրեցին սուրբ անվանդ մեջ՝ իբրև տաճար և
իրենց սուրբ արյան հեղման վայրում, իրենց աղոթքները սփռեցին՝
իբրև անուշահոտ խունկ. նրանց բարեխոսությամբ ողորմիր մեզ,
Քրիստոս:

Solo
mf **animato**

allarg. **animato**

S 1
 13 *allarg.* *mf* **animato**
 րա - մա - յր, n' - h, go - դեա կա - թիլ մի կու -
 կել - տո - յւ, n - h, փուշ եւ տա-տասկ բու - սոյց

S 2
allarg. **animato**
 րա - մա - յր, n' - h, փուշ, տա

A 1
allarg. *mf* **animato**
 Տի րա - մայր, n' - h, go դեա կա - թիլ
 եղ կել - տոյս, n - h, n վ եղ - կել - տոյս,

A 2
allarg. *mf* **animato**
 րա - մայր, n' - h, go դեա
 կել - տոյս, փուշ եւ տա - տասկ

tutti
a tempo

S 1
 17 *rit.* **a tempo**
 սա - կան qo - րեղ կե - նաց, n'
 եր - կիր n - դոր մեկ - տոյս, n

S 2
rit. **a tempo**
 յր, qo - րեղ կե - նաց,
 տասկ բու - սոյց եր - կիր.

A 1
rit. **a tempo**
 կու - սա - կան qo - րեղ կե - նաց,
 փուշ, տա - տասկ, բու - սոյց եր - կիր,

A 2
rit. **a tempo**
 կա - թիլ մի կու - սա - կան qo - րեղ կե - նաց, n'
 բու - սոյց եր - կիր, n - դոր մեկ - տոյս, n

21

S 1
 h, qo - րեղ կե - նա ց:
 h, n - դոր մեկ - տոյս:

S 2
 n' - h, qo - րեղ կե - նաց:
 n - h, n - դոր մեկ - տոյս:

A 1
 n' - h, qo - րեղ կե - նաց:
 n - h, n - դոր մեկ - տոյս:

A 2
 h, qo - րեղ կե - նաց:
 h, n - դոր մեկ - տոյս:

Անհայտ Հեղինակ
Վարանիմ ի մեղաց
Տաղ Աստուածածնայ

Վարանիմ ի մեղաց,
դու ազատիչ մեղուցելոյս, ղ՛վ Տիրամայր,
ղի, ղ՛վ Տիրամայր,
ղի ցօղեա՛ կաթիլ մի
կուսական զօրեղ կենաց,
ղի զօրեղ կենաց:

Յիմ նախկին վայելմանց
արժանապէս արտաքսեցայ, ղի եղկելոյս,
ղի, ղ՛վ եղկելոյս.
ղի փուշ եւ տատասկ
բռայց երկիր ողորմելոյս,
ղի, ողորմելոյս:

Վարանում ենք մեղքերից, ղ՛վ մեղանջողներիս ազատիչ,
ղ՛վ Տիրամայր, ղի, ով Տիրամայր,
ղի ցողի՛ր զօրեղ կյանքի կուսական մի կաթիլ, ղի զօրեղ կյանքի:

Իմ նախկին վայելքներից արժանապէս արտաքսվեցի,
ղի եղկելիիս, ղի եղկելիիս,
ղի փուշ և տատասկ աճեցրեց երկիրն ինձ՝ ողորմելիիս, ղի ողորմելիիս:

Երեք Շարական

ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ (8-րդ դ.)
Բազմաձայնումը՝ Դանիել Երաժշտի

Con luminosita

mf

Soprano I
Սա է Բանն Աս-տը - ու - ած, որ յա - ռաջ, քան

Soprano II

Alto I
mf
Սա է Բանն

Alto II
mf
Սա է Բանն Աս-տը - ու ած զյա - ի -

5

S. I
զյա - ի - տեանս. ան-ճա-ռե - լի զա - լըս - տեամբն իս -

S. II
Չյա - ի - տեանս. զա - լըս - տեամբն իս -

A. I
զյա - ի - տեանս զա - լըս - տեամբն իս

A. II
տեանս. զա - լըս - տեամբն

18 *Pregando* *mp*

S. I Oq - նա - կան իմ

S. II *mp* Oq - նա - կան իմ

A. I *mp* Oq - նա - կան իմ

A. II *mp* Oq - նա - կան ըն - դու - նե - լի ե - դե իմ Տէր, _____

23

S. I Տէր, ինձ ի փրկ - կու - թիւն.

S. II Տէր, ինձ ի փրկ - կու - թիւն. Աս -

A. I Տէր, _____

A. II ինձ ի փրկ - կու - թիւն. սա է իմ Աս - տուած,

28 **rit**

S. I
— Աս - տուած, ըզ - սա:_____

S. II
տուած._____ ըզ - սա:_____

A. I
փա - ռա - լո - րե - ցից ըզ - սա:_____

A. II
եւ փա - ռա - լո - րե - ցից ըզ - սա:_____

32 *f* **Maestoso, giubilante**

S. I
Տէր, ըզ - լուր թո լը - ուայ եւ և զար-հու-րեալ դո - դա - ցայ_____

S. II
Տէր,_____ Տէր,_____ զար-հու-րեալ դո - դա - ցայ_____

A. I
Տէր,_____ Տէր,_____

A. II
Տէր,_____ Տէր,_____

36

S. I
յոյժ. նա - յե - ցայ ի գոր - ծըս քո եւ փառա - ւո - թեցից

S. II
յոյժ. Stp, Stp,

A. I
Stp,

A. II
Stp,

41

S. I
ըզ - քեզ՝ Քրիստոս՝ որպէս մար - դա - սէր:

S. II
Քրիստոս՝ մար - դա -

A. I
Քրիստոս՝ մար - դա -

A. II
մար -

45

S. I
 Stp, ըզ - լուր քո լը - ուայ ես եւ զար-հու-րեալ

S. II
 սէր: Stp,

A. I
 - սէր: Stp, ըզ - լուր քո լը - ուայ ես եւ զար-

A. II
 - դա - սէր: Stp,

49

S. I
 դո - դա - ցայ յոյժ. նա - յե - ցայ ի գոր-ծըս քո եւ փա - նա-

S. II
 Stp, նա - յե - ցայ

A. I
 հու-րեալ դո - դա - ցայ յոյժ. Stp,

A. II
 նա - յե - ցայ ի գոր-ծըս

54

S. I
լո - րե - ցից ըզ - քեզ՝ — Զրիս - տոս՝

S. II
ի գոր - ծըս քո, — Զրիս - տոս՝

A. I

A. II
քո՝

57

S. I
որ - պես մար - դա - սէր:

S. II
որ - պես մար - դա - սէր:

A. I
որ - պես մար - դա - սէր:

A. II
— մար - դա - սէր:

Սյրեփանոս Սյունեցի (8-րդ դ.)

Երեք Շարական

Կարգ Աւագ Օրհնութեանց

1. Սա է Բանն Աստուած

Սա է Բանն Աստուած որ յառաջ քան
զյափտեանս. անճառելի գալըստեամբն իւրով
յայտնեցաւ տիեզերաց ծննեալ ի կուսէն:

* * *

Սա հավիտյաններից առաջ Բան Աստված է, որ իր
անբացատրելի գալստյամբ տիեզերքին հայտնվեց՝
Կույսից ծնվելով:

2. Օգնական ընդունելի

Օգնական ընդունելի եղել իմ տեր ինձ ի փրկութիւն. սա է իմ
աստուած, եւ փառաւորեցից ըզսա:

Ի խաչին բեւեռեցաւ եւ զդժոխսոցն ելոյծ ըզբռնութիւն. սա է իմ
աստուած եւ փառաւորեցից ըզսա:

Որ մահուամբն ելոյծ ըզմահ, եւ յարութեամբն զնախահորըն ջընջեաց
ըզմեղս. սա է իմ աստուած, եւ փառաւորեցից ըզսա:

Աստուածածին դու ես յոյս եւ ապաւեն խոստովանողացս ըզքեզ.
որդոյ քո եւ աստուծոյ բարեխօսեա կեցուցանել ըզմեզ:

* * *

Տերն օգնական և ապավեն եղալ ինձ՝ իմ փրկության համար. սա է իմ
Աստվածը, և ես փառավորելու եմ նրան:

Խաչի վրա գամվեց և գերեզմանի բռնությունը խորտակեց. սա է իմ
Աստվածը, և ես փառավորելու եմ նրան:

Նա մահվամբ մահը խորտակեց և իր Հարությամբ նախահոր մեղքը
ջնջեց. սա է իմ Աստվածը, և ես փառավորելու եմ նրան:

Աստվածածին, դու ես հույսն ու ապավենը քեզ խոստովանողներիս.
բարեխոսիր Որդուդ և Աստծուն, որ փրկի մեզ:

3. Տէր ըզլուր

Տէր ըզլուր քո լըայ ես եւ զարհուրեալ դողացայ յոյժ. նայեցայ ի գործըս քո եւ փառաւորեցից ըզքեզ քրիստոս որպէս մարդասէր:

Ձի աղբիւրն կենաց քրիստոս անապական մարմնացաւ ի քէն կոյս. ըզմեղըս մեր բոցակիզեալ շիջոյց. վասն որոյ ըզքեզ անդադար բարեբանեսցուք:

Ձի ի քէն ցընծութիւն ծընաւ տիեզերաց նախայաւիտեան բանն, փառակից հօր եւ սուրբ հոգւոյն. ըզնա անդադար աղաչեա վասն անձանց մերոց:

* * *

Տէր, ձայնդ լսեցի և, գործերդ տեսնելով, հոյժ զարհուրեցի և դողացի. որպէս մարդասէրի, փառավորելու եմ քեզ, Քրիստոս:

Որովհետև կյանքի աղբյուրը՝ Քրիստոսը, քեզնից անապական մարմնացավ, ի՞նչ Կոյս, և մեր մեղքերը բոցակիզելով մարեց, ուստի անդադար բարեբանելու ենք քեզ:

Որովհետև Հորը և Սուրբ Հոգուն փառակից նախահավիտյան Բանը քեզնից ցնծություն ծնեց աշխարհին, մեր անձերի համար անդադար աղաչիր նրան:

Ջորս ըստ պատկերի քում

Կանոն Վերացման Սրբոյ Խաչին

ԱՇՈՏ ՊԱՏՐԻԿ (7-րդ դ.)

Բազմաձայնումը՝ Դանիել Երաժշտի

Moderato

mp

Soprano 1

1. Ջորս ըստ պատ - կե - թի քու - մ ստեղ - ծեր, նո - թո - գե - լով
2. Կե - ցո զոր - ղի ծա - ռա - յի քո, զոր - ի հոռվ - մայ

Soprano 2

1. Ջորս ըստ պատ - կե - թի քում ստեղ - ծեր, նո - թո -
2. Կե - ցո զոր - ղի ծա - ռա - յի քո, զոր -

Alto 1

mp

1. Ջորս ըստ պատ - կե - թի քում, նո - թո -
2. Կե - ցո զոր - ղի ծա - ռա -

Alto 2

mp

1. Ջորս ստեղ - ծեր, նո - թո - գե - լով
2. Կե - ցո զոր - ղի ծա - ռա - յի,

5

f Maestoso

S. 1

քեզ տա - ճա - թա - ցու - ցեր, զնո - թոգ - եալս
զա - հիցն վե - թա - պատ - ուե - ցեր. ուր ե - ղին

S. 2

գե - լով տա - ճա - թա - ցու - ցեր, զնո - թոգ - եալս
վե - թա - պատ - ուե - ցեր. ուր ե - ղին

A. 1

գե - լով տա - ճա - թա - ցու - ցեր, զնո - թոգ - եալս
յի, զոր վե - թա - պատ - ուե - ցեր. ուր ե - ղին

A. 2

քեզ տա - ճա - թա - ցու - ցեր, զնո - թոգ -
զոր վե - թա - պատ - ուե - ցեր. ուր ե -

9

S. 1

ի մէնջ ըզ - տա - ճա - - ըս ըն - կալ
զվէ - մըն հա - լա - տո - - յ հի - ման

S. 2

ի մէնջ տա - ճա - ըս ըն - կալ
զվէ - մըն հա - լա - տոյ հի - ման

A. 1

ի մէնջ տա - ճարս ըն - կալ
զվէ - մըն հա - լա - տոյ հի - ման

A. 2

եալս ի մէնջ տա - ճարս ըն - կալ
դին զվէ - մըն հա - լա - տոյ հի - ման

13 rit.

S. 1

քեզ ի բնա - կու - թիւ - ն:
սուրբ ե - կե - ղե - ցւո - յ:

S. 2

քեզ ի բնա - կու - թիւն:
սուրբ ե - կե - ղե - ցւոյ:

A. 1

քեզ ի բնա - կու - թիւն:
սուրբ ե - կե - ղե - ցւոյ:

A. 2

քեզ բնա - - - կու - թիւն:
սուրբ ե - կե - - - ղեց - ոյ:

Աշոտ Պապրիկ (7-րդ դ.)

Ջորս ըստ պատկերի քում

Կանոն Վերացման Սրբոյ Խաչին

Ջորս ըստ պատկերի քում ըստեղծեր, նորոգելով քեզ տաճարացուցեր, զնորոգեալս ի մէջ ըզտաճարս ընկալ քեզ ի բնակութիւն:

Որ շնորհես մեզ կենաց տըտող զկենդանագիր քո ծառայական կերպի, բերելով ըզբոլորից ըզվերաբերողդ ի փառքս սուրբ Երրորդութեան:

Կեցո զորդի ծառայի քո, զոր ի հռովմայ գահիցըն վերապատուեցեր. ուր եղին ըզվեմըն հաւատոյ հիման սուրբ Եկեղեցոյ:

Որ ըզվերջինս գայս հրաշագարդեցեր, քեւ չափ բնակցութեամբ հիմնափայլեցեր, ըզպանծալի եւ ըզփայլեալ ըզփառքս տանս այս վերջինս քան զառաջինս:

* * *

Ո՛վ Քրիստոս, դու, որ մարդկանց քո պատկերով ստեղծեցիր եւ նրանց նորոգելով քեզ տաճար դարձրիր, նորոգված այս տաճարն ընդունիր մեր կողմից որպէս քեզ բնակարան:

Ո՛վ կյանք տվող, քո մարդկային կերպարանքի այս կենդանի պատկերը շնորհում ես մեզ, դու քեզ՝ բոլորդ երկինք հանողդ՝ մեզ հայտնելով Սուրբ Երրորդության փառքի համար:

Փրկիր ծառայիդ որդուն (Գրիգոր Վկայասերին), որ պատվի արժանացրիր Հռոմի (Կ. Պոլիս) գահի կողմից, որտեղ Սուրբ Եկեղեցու հիմքը կազմող հավատքի հիմնաքարը դրեցին (381, Տիեզերական Բ. ժողով):

Այս նորոգված եկեղեցին հրաշալիորեն զարդարեցիր քո պատկերի՝ նրա մեջ զետեղմամբ, հիմնովին պայծառացրիր նորոգված այս տունը և դարձրիր ավելի պանծալի, պայծառ և փառավոր, քան եր նախապէս:

Առաւօտեան քաղցր Եւ անոյշ հովերըն

ՊԵՏՐՈՍ ՂԱՓԱՆՑԻ (18-րդ դ.)
Բազմաձայնումը՝ Դանիել Երաժշտի

Estatico

Soprano 1 *mf*
Ա - ռա - լօ - տեան քաղ - ցըր Ա ա - - նոյշ,

Soprano 2 *mp*
Ա - ռա - - լօ - տեան

Alto 1 *mp*
Ա - - - - ռա - - - - լօ - տեան

Alto 2 *mp*
Ա - - - - ռա - լօ - տեան

6

S 1
հո - - - - վե - րըն, հո - վե - րըն, ա - վաղ,

S 2
հո - - - - վե - րըն, մեր - - - - -

A 1
հո - - - - վե - րըն, ա - - - - -

A 2
հո - - - - վե - րըն, ա - վաղ,

10

S 1
մեր - ծեալ հըն - չեն մեղ - մով թը - փոցդ

S 2
ծեալ հըն - չեն թը - փոցդ

A 1
- - - - նոյշ հըն - - - - -

A 2
- - - - - հըն - չեն, մեղ - մով:

14

(Solo)
mp

S1
քո - վե - թըն: Արդ, ծա - ծա - նին ա - չացս լը - ցեալ

S2
քո - - - - վե - թըն: Արդ,

A1
չեն: Արդ, ծա - ծա - նին,

A2
Արդ, ծա - ծա - նին ա -

19

S1
ծո - վե - թըն, ախ: 6

S2
ծա - ծա - նին ծո - վե -

A1
ախ:

A2
չացս լը - ցեալ ծո -

22

(Tutti)
mf

S1
Բա - ցիր, բա - ցիր, իմ կար - միր

S2
թըն: Բա - - - - ցիր, իմ

A1
Բա - - - - ցիր, բա -

A2
վե - թըն: Բա - - - - - - - - ցիր,

26 (Solo) (Tutti)

S 1 վարդ, ան - նը - ման, գե - դող նը - ման

S 2 կար - միր վարդ, գե - - - - -

A 1 - - - - - ցիր, վարդ, գե -

A 2 իմ կար - միր վարդ,

30 (Solo)

S 1 ա - րե - գա - կան վառ - վառ - ման:

S 2 դող նը - ման վառ - վառ -

A 1 դող նը - ման վառ -

A 2 գե - - - - - դող ան -

33 (Tutti) *p rit.*

S 1 Ախ, ախ:

S 2 - - - - - ման: Ախ:

A 1 վառ - ման: Ախ:

A 2 նը - - - - - ման: Ախ:

Պեպրոս Ղափանցի (18-րդ դ.)

Առաւօտեան քաղցր եւ անոյշ հովերըն

Առաւօտեան քաղցր և անոյշ հովերըն,
Մերձեալ հընչեն մեղմով թըփոցդ քովերըն,
Արդ, ծածանին աչացս լըցեալ ծովերըն,
Բացիր, բացիր, իմ կարմիր վարդ աննըման,
Գեղըդ նըման արեգական վառվառման:

Տեսեալ զծաղկունս զամենն ինձ փուշ վարկանեմ,
Թւօք բախեալ զսիրտ իմ քնքուշ հարկանեմ,
Զցաւ սըրտիս, ահա, քեզ յուշ արկանեմ.
Բացիր, բացիր, իմ կարմիր վարդ աննըման,
Գեղըդ նըման արեգական վառվառման:

Քանի ողբամ՝ նոր ի նորոյ խոցոտիմ,
Զփայլուն գեղդ ի միտ բերեալ բոցոտիմ,
Յորդ արտասուօք ցայգ ու ցերեկ թացոտիմ.
Բացիր, բացիր, իմ կարմիր վարդ աննըման,
Գեղըդ նըման արեգական վառվառման:

Գողթնի քնարք

ԳԱՐԵԳԻՆ ՍՐԿԱՆՉՏՅԱՆՑ (1840 - 1892)
Բազմաձայնումը՝ Դանիել Երաժշտի

Soprano 1 *mp*
Թէ հայ - րե - նեաց պը - սա - կա - դիր Գողթ-նի քը -

Soprano 2 *mp*
Թէ

Alto 1 *mp*
Թէ

Alto 2

6
S. 1
նարք լը - ուկ են, լը - ուկ են,
S. 2
Գողթ-նի քը - նարք լը - ուկ
A. 1
Գողթ-նի քը - նարք լը - ուկ են, լը - ուկ
A. 2 *mp*
Գողթ - նի քը - նարք լը - ուկ

11
S. 1
երկ - նից թող զան ան - մահ հո - գիք
S. 2
են, երկ - նից թող զան ան - մահ
A. 1
են, երկ - նից թող զան ան - մահ
A. 2
են, երկ - նից թող զան ան - մահ

16

S. 1 *1.* *2.*
 Հա - յոց քա - ջեր պը - սա - կել: Երկ - նից թող կել:

S. 2
 հո - զիք Հա - յոց քա - ջեր պը - սա - կել: կել:

A. 1
 հո - զիք Հա - յոց քա - ջեր պը - սա - կել: կել:

A. 2
 հո - զիք Հա - յոց քա - ջեր պը - սա - կել: կել:

23 *mf*

S. 1
 Մա - սեաց գա - գաթն թող գան քազ - մին:

S. 2

A. 1 *mf*
 Մա - սեաց գա -

A. 2
 Մա - սեաց գա - գաթն թող գան քազ -

27

S. 1
 երկ - նից գունդ - գունդ հրեշ - տակ - ներ:

S. 2
 երկ - նից գունդ - գունդ հրեշ - տակ -

A. 1
 գաթն Թող գան քազ - մին հրեշ - տակ -

A. 2
 մին երկ - նից գունդ - գունդ

31

S. 1
հրեշ - տակ - ներ: Աս - տուած ի - ջեր

S. 2
ներ, հրեշ - տակ - ներ: Աս - տուած ի -

A. 1
ներ, հրեշ - տակ - ներ

A. 2
հրեշ - տակ - ներ:

35

S. 1
ի Հա - յաս - տան,

S. 2
ջեր ի Հա - յաս - տան, Հա - յոց

A. 1
Աս - տուած ի - ջեր ի Հա - յաս - տան,

A. 2
Աստ - ուած ի - ջեր ի Հա - յաս - տան,

39

S. 1
Հա - յոց ա - րիւնն հո - տո - տել: Աս-տուած ի - տել:

S. 2
Հա - յոց ա - րիւնն հո - տո - տել: տել:

A. 1
Հա - յոց ա - րիւնն հո - տո - տել: տել:

A. 2
Հա - յոց ա - րիւնն հո - տո - տել: տել:

45

mp

S. 1 Ար - ծուիր, բա - - զէք Հա -

mp

S. 2 Ար - ծուիր, բա - զէք:

mp

A. 1 Ար - - - - - ծուիր, - - - - - բա - զէք Հա -

A. 2 Ար - ծուիր, - - - - - բա - զէք, Հա - յաս - տա - նի եւ ա - բա -

50

S. 1 յաս - տա - նի եւ ա - բա - զիլ ամ - բան հիւր,

S. 2 Հա - յաս - տա - նի, ա - բա - զիլ ամ - բան

A. 1 յաս - տա - նի, - - - - - ա - բա - զիլ ամ - բան

A. 2 զիլ ամ - բան հիւր, - - - - - ամ - բան հիւր,

55

S. 1 դուք հրս - կն - ցէք այս աշ - խարհ

mf

S. 2 հիւր, դուք հրս - կն - ցէք այս աշ - խար -

A. 1 հիւր, դուք հրս - - - - - կն - ցէք

A. 2 - - - - - դուք հրս - կն - ցէք

59

S. 1
հին, ժա - ռան - զն - ցեք

S. 2
հին, ժա - ռան - զն - ցեք Հա - յոց

A. 1
այս աշ - խար - հին, ժա - ռան - զն - ցեք

A. 2
այս աշ - խար - հին, ժա - ռան - զն - ցեք

63

S. 1
Հա - յոց տուն: Դուք հըս - կն - տուն:

S. 2
տուն: տուն:

A. 1
Հա - յոց տուն: տուն:

A. 2
Հա - յոց տուն: տուն:

67

S. 1
Մո - խիր - նն - րու վը - րայ նըս - տեք, ա - լն - րակ - ներ

S. 2
Մո - խիր - նն - րու վը - րայ նըս - տեք, ա - լն - րակ -

A. 1

A. 2

73

S. 1 շի - նէք բոյն, շի - նէք բոյն, և ծի - ծեռ -

S. 2 նէք շի - նէք բոյն,

A. 1

A. 2

78

S. 1 նակ գայ ու եր - թայ

S. 2 եւ ծի - ծեռ - նակ գայ ու եր - թայ,

A. 1 եւ ծի - ծեռ - նակ գայ ու եր - թայ,

A. 2 եւ ծի - ծեռ - նակ գայ ու եր - թայ,

83

S. 1 մին - չեւ Հա - յոց գայ գա - բուն: և ծի - ծեռ - բուն:

S. 2 մին - չեւ Հա - յոց գայ գա - բուն: բուն:

A. 1 մին - չեւ Հա - յոց գայ գա - բուն: բուն:

A. 2 մին - չեւ Հա - յոց գայ գա - բուն: բուն:

Գարեգին Սրվանձությանց (1840 – 1892) **Գողթնի քնարք**

Թե հայրենեաց պսակադիր
Գողթնի քնարք լռել են,
Երկնից թող գան անմահ հոգիք,
Հայոց քաջեր պսակել:

Մասեաց գագաթն թող գան բազմին,
Երկնից գունդ-գունդ հրեշտակներ,
Աստուած իջեր ի Հայաստան,
Հայոց արիւնն հոտոտել:

Փախէք ամպեր Շաւարշանէն,
Ալ մի ցօղէք ձեր ցօղեր,
Շաւարշանը ոռոգուած է
Հայոց քաջաց արիւնէն:

Եւ կծլին, եւ կծնին
Այս դաշտին մէջ ոչ խոտ՝ վարդ,
Այլ Վարդանայ ինկած երկիր
Պիտի ծաղկի սուրբ հաւատ:

Քանդակագործ քաջ Եղիշէն
Գրիչ ի ձեռն գայ յԱրտագ,
Չափէ, ձեւէ, գրէ, դրոշմէ
Կեանք, մահ, հաւատք Վարդանայ:

Ո՛հ Վարդանայ անուան արժան
Մասիս կանգնի մահարձան,
Մենաստաններ՝ խաչն ի գմբեթ,
Աւետարան սուրբ հաւատ:

Ծագէ՛ արեւ քոյդ ճառագայթ,
Խաղտեաց լեռներն, մութ խորշէն,
Այնտեղ ինկաւ քաջ Հմայեակ,
Այնտեղ պառկեր նահատակ:

Լուսին, լուսին աչօքդ անքուն,
Պահէ Հայոց ոսկորներ,
Եւ Մայիսի զուարթ ցօղով
Ցողէ անոնց շիրիմներ:

Արծուիք, բազէք Հայաստանի
Եւ արագիլ ամրան հիւր,
Դուք հսկեցէք այս աշխարհին,
Ժառանգեցէք Հայոց տուն:

Մոխիրներու վրայ նստէք,
Աւերակներ շինեք բոյն,
Եւ ծիծեռնակ գայ ու երթայ,
Մինչեւ Հայոց գայ գարուն:

Յարուկ Մ'ունիմ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
Բազմաձայնումը՝ Դանիել Երաժշտի

Dolente (♩ = 69-72)
mp

Soprano solo
Յա - լուկ մու - նիմ խո - րո - տիկ, ուն - քերն ի
Ya - ruk mu - nim kho - ro - rik, un - qern i

Alto 1
mp
Յա - լուկ մու - նիմ, ուն -
Ya - ruk mu - nim, un -

Alto 2
mp
Յա - լուկ
Ya - ruk

S. solo
mf
կեր, ինք՝ բարձ - րիկ, Կեր - ուն, վառ - ուն՝ ես
ker, inq barc - rik: Ker - vim, var - vim yet

A. 1
mf
քերն ի կեր, բարձ - րիկ, Կեր - ուն,
qern i ker, barc - rik: Ker - vim,

A. 2
mf
բարձ - րիկ, Կեր - ուն, ես
barc - rik: Ker - vim, yet

S. solo
չի գա, սիրտս ի աչքի ջուր չի տա: Կեր
chi ga, sirts i ay - re jur chi ta. Ker

A. 1
չի գա, սիրտս աչքի ջուր չի տա:
chi ga, sirts ay - re jur chi ta.

A. 2
չի գա, սիրտս, ջուր չի տա:
chi ga, sirts, jur chi ta.

mp

S. solo
 2.
 ամայ: Յա - րուկ մու - ճիճ, խո - րո - ւիկ, մն -
 տա. Ya - ruk mu - nim, kho - ro - rik, un -

mp

A. 1
 ամայ: Յա - րուկ մ'ու - ճիճ խո - րո - ւիկ, մն -
 տա. Ya - ruk mu - nim kho - ro - rik, un -

mp

A. 2
 ամայ: Յա - րուկ մու - ճիճ, խո - րո - ւիկ, մն -
 տա. Ya - ruk mu - nim, kho - ro - rik, un -

mf

S. solo
 քերթի ի կն, խոթ քարձ - քիկ: Կեր -
 qern i ke, inq bare - rik: Ker -

A. 1
 քերթի ի կն, խոթ քարձ - քիկ:
 qern i ke, inq bare - rik:

A. 2
 քերթի ի կն, խոթ քարձ - քիկ:
 qern i ke, inq bare - rik:

mf

S. solo
 միճ, վառ - միճ, խո չի գայ,
 vim, var - vim yet chi ga,

mf

A. 1
 Կեր - միճ, վառ - միճ, չի գայ,
 Ker - vim, var - vim chi ga,

mf

A. 2
 Կեր - միճ, չի գայ,
 Ker - vim, chi ga,

1. 2.

S. solo
 սիրտս ի ալ - րե ջուր չի ամայ: Կեր ամայ:
 sirts i ay - re jur chi ta. Ker ta.

A. 1
 ջուր չի ամայ: ամայ:
 jur chi ta. ta.

A. 2
 սիրտս ի ալ - րե ջուր չի ամայ: ամայ:
 sirts i ay - re jur chi ta. ta.

դը - րել — եմ — դի - ք, ջըխ-տի գոգ-նոցն էլ լսու - աիկ,
 də - rel — em — di - qə, jəkh-ti gog-nocn el las - tik,

S. 1

նա, նայ, — նայ, նա, նայ, նա, նայ, նայ,
 na, nay, — nay, na, nay, na, nay, nay,

S. 2

նա, նայ, նա, նայ, նա, նայ, նայ, նայ, նա, նայ, նա, նայ, նայ,
 na, nay, na, nay, na, nay, nay, nay, na, nay, na, nay, nay,

A. 1

նա, նայ, նա, նայ, նա, նայ, նայ, նայ, նա, նայ, նայ, — նայ,
 na, nay, na, nay, na, nay, nay, nay, na, nay, nay, — nay,

A. 2

նա, նայ, նա, նայ, նա, նայ, նայ, նայ, նա, նայ, նայ, — նայ,
 na, nay, na, nay, na, nay, nay, nay, na, nay, nay, — nay,

ա - սա', աւն - ջի - գյար տը - դայ, — ինչ է — քո — միտ - ք:
 a - sa, an - ji - gyar tə - gha, — inch e — qo — mit - qə.

նայ, — նայ, — նա, նայ, —
 nay, — nay, — na, nay, —

նա, նայ, նա, նայ, նա, նայ, նա, նայ, նա, նայ, նայ, —
 na, nay, na, nay, na, nay, na, nay, na, nay, nay, —

նա, նայ, նա, նայ, նա, նայ, նա, նայ, նա, նայ, նայ, նա, նայ,
 na, nay, na, nay, na, nay, na, nay, na, nay, nay, na, nay,

նա, նայ, նա, նայ, նա, նայ, նա, նայ, նա, նայ, նայ, նա, նայ,
 na, nay, na, nay, na, nay, na, nay, na, nay, nay, na, nay,

Ժողովրդական երգեր

Յարուկ մ'ունիմ

Յարուկ մ'ունիմ խորոտիկ,
Ունքերն ի կեռ, ինք՝ բարձրիկ:

Կերուիմ, վառուիմ՝ ետ չի գայ,
Սիրտս ի այրե՛ջուր չի տայ:

Մատիս մատնիքը

Մատիս մատնիքը դրել եմ դիքը,
Ասա, անջիգյար տղա, ի՞նչ է քո միտքը:

Սարեն իջան ջուխտ աղջիկ
Մատիս մատնիքը դրել եմ դիքը
Ջխտի գոգնոցն էլ լաստիկ,
Ասա, անջիգյար տղա, ի՞նչ է քո միտքը:

Մատնիքը մատովս չէր,
Մատիս մատնիքը դրել եմ դիքը
Սիրածս սրտովս չէր,
Ասա, անջիգյար տղա, ի՞նչ է քո միտքը:

**Գորանի
Սաամա Կելներ**

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
Բազմաձայնումը՝ Դանիել Երաժշտի

Rubato (♩ = 66 - 69)

mf

Soprano 1

Յո - ռեն իմ գա - ներ, վայ,

Soprano 2

mp

Alto 1

վայ,

mp

Alto 2

վայ,

6

S. 1

նի - լեր է պառ - կի, վայ,

mp

S. 2

վայ,

mf

ալը - տը - կուց

A. 1

վայ, ալը - տը - կուց

mf

A. 2

նի - լեր է պառ - կի,

10 *mf*

S. 1 վայ, չըմ կըր - նա թար - կի:

S. 2 սի - րնր իմ, չըմ թար - կի:

A. 1 վայ, չըմ թար - կի:

A. 2 վայ, չըմ թար - կի:

Allegro (♩ = 76 - 80)

14 solo *mp* tutti *mf*

S. 1 Սաս-մա կել-նըր բա - րակ ծովս, վայ, գյու-լում, գյու - լում գյու-լում,

S. 2 վայ, գյու - լում,

A. 1 վայ, գյու - լում,

A. 2 վայ, վայ, գյու - - - լում,

18 *mf p)* *mf)*

S. 1
Ես յարմու - նեմ Բու - լա - նուխ, վայ, գյու-լում էր, — ջան, գյու - լում:

S. 2 *mf p)* *mf)*
Ես յարմու - նեմ վայ, ջան, գյու - լում:

A. 1 *mf p)* *mf)*
Ես յարմու - նեմ վայ, ջան, գյու - լում:

A. 2 *mf p)* *mf)*
Ես յարմու - նեմ վայ, ջան, գյու - լում:

22 solo tutti

S. 1
Սըր - տիկ մա - լուլ մի՛ կե - նա, վայ, գյու - լում, գյու -

S. 2
Սըր - - - տիկ վայ, գյու - լում,

A. 1
Սըր - տիկ մա - լուլ մի՛ կե - նա,

A. 2
Սըր - տիկ մա - լուլ մի՛ կե - նա, — վայ, գյու - լում,

25 *mf p)*

S. 1 - լում, գյու - լում: Ա₂ - խարք մար - դու

S. 2 *mf p)*
վայ, գյու - լում: Ա₂ - խարք

A. 1 *mf p)*
վայ, գյու - լում: Ա₂ - խարք

A. 2 *mf p)*
գյու - լում, գյու - լում: Ա₂ - խարք

27 *mf)*

S. 1 չի՛ մը - նա, վայ, գյու-լում էր, ջան, գյու - լում:

S. 2 *mf)*
չի՛ մը - նա, ջան, գյու - լում:

A. 1 *mf)*
չի՛ մը - նա, ջան, գյու - լում:

A. 2 *mf)*
չի՛ մը - նա, ջան, գյու - լում:

Ժողովրդական երգեր

Գորանի

Ցորեն իմ ցաներ,
վայ, ելեր է պառկի
Վայ, վայ, չըմ կըրնա թարկի:

Սասմա կելներ

Սասմա կելներ բարակ ծուխ,
Վայ գյուլում, գյուլում, գյուլում,
Ես յար մ'ունիմ Բուլանուխ,
Վայ գյուլում էր, ջան գյուլում:

Սըրտիկ, մալուլ մի՛ կենա,
Վայ գյուլում, գյուլում, գյուլում,
Աշխարհ մարդու չի մնա,
Վայ գյուլում էր, ջան գյուլում:

Բովանդակություն

1. «Գեղարդի» լույսը Դանիել Երաժիշտ	7
2. «Գեղարդ» երգեցիկ խումբ	14
3. Մեսրոպ Մաշտոց Ողորմեա ինձ Աստընում	18
4. Մովսես Խորենացի Լոյս Լուսոյ Մայր	21
5. Երեք Շարական	22
Ա. Մովսես Խորենացի, Ըզբեզ աղաչեմք հանապազ	34
Բ. Անանիա Շիրակացի, Վասըն մերոյ փրկութեան	35
Գ. Պետրոս Գետադարձ, Աղաչեմք ըզբեզ, Տեր բարեխօսութեամբ	36
6. Անհայտ հեղինակ Վարանիմ ի մեղաց	39
7. Ստեփանոս Սյունեցի Երեք շարական Ա. Սա է Բանն Աստընում Բ. Օգնական ընդունելի Գ. Տեր, ըզլուր	47
8. Աշոտ Պատրիկ Զորս ըստ պատկերի քում	51
9. Պետրոս Ղափանցի Առաւօտեան քաղցր եւ անոյշ հովերըն	55
10. Գարեգին Սրվանձտյանց Գողթնի քնարք	62
11. Յարուկ մ'ունիմ եւ Մատիս մատնիքը	68
12. Գորանի եւ Սասմա կելներ բարակ ծովս	73

ԳԵՂԱՐԴԻ ԼՈՒՅՍԸ

Շարականներ, տաղեր, ժողովրդական երգեր
Դանիել Երաժշտի մշակմամբ

Առաջաբանը՝
Դանիել Երաժշտի
Երևան, 2022

«Գեղարդ» երգեցիկ խումբ

Գեղարվեստական ղեկավար՝ Միեր Նավոյան
Խմբավար և մեներգչուհի՝ Անահիտ Պապայան
Հնչյունային ռեժիսոր՝ Սերգեյ Գասպարյան
Նոտային շարվածքը՝ Ռուբեն Խաչատրյան
Տեքստի շարվածքը՝ Անի Գաբրիելյան
Ձևավորող և էջադրող՝ Մարտիրոս Դոլմաջյան
Խմբագիր՝ Գոհար Դանիելյան
Գործադիր պրոդյուսեր՝ Նարեկ Յարութինեան



Սկանավորեք QR կոդը՝ երգերը լսելու համար:

